Նյութական իրավունք

1.Կարող են արդյո՞ք քրեական օրենքի նորմերն անալոգիայով կիրառվել,

ա) այո,

բ) այո՝ միայն քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը,

գ) այո՝ միայն քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը,

դ) այո՝ քրեական օրենքի Ընդհանուր և Հատուկ մասերի նորմերը, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը:

2. Նոտար Ե-ն առաջարկեց Ք-ին իրեն տալ մեկ միլիոն ՀՀ դրամ՝ վերջինիս օգտին որոշակի գործողություն կատարելու համար: Հետագայում՝ մինչ գումարը փոխանցելը, իրավապահ մարմինները բացահայտեցին տեղի ունեցածը և ձերբակալեցին Ե-ին: Ինչպե՞ս պետք է որակել Ե-ի արարքը:

ա) կաշառք ստանալու նախապատրաստություն,

բ) կաշառք ստանալ,

գ) մասնավոր ոլորտում կաշառք ստանալու նախապատրաստություն,

դ) մասնավոր ոլորտում կաշառք ստանալ: